



ՎՈՒՈՂՅԱ ՄԱՆԱՅԱՆ

ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության
ամբիոնի որդենտ, աշխարհագրական
գիտությունների թեկնածու

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՏԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆ-ԼԱՆՂԱՖՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

Հոդվածում հիմնավորվում է գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման համակարգերի հարմարվողականության անհրաժեշտությունը լանդշաֆտային գոտիների ուղղաձիգ հերթափոխության առանձնահատկությունների նկատմամբ: Առաջարկվում է ագրոլանդշաֆտի կայունության գինը սահմանել որպես ՀՀ տարածքում առանձնացված լանդշաֆտային գոտիների սահմաններում գյուղատնտեսական նթերքների արտադրության մասնագիտացման գործընթացում տնտեսավարողի կատարած ամենամյա ծախսերի և հողային բերրիության ամենամյա վերարտադրության արտադրական ծախսերի բաղադրիչ մասի գումար: Մատնանշվում է հողային վճարների գոտիական տարբերակման անհրաժեշտությունը ըստ լանդշաֆտային գոտիների՝ հողերի պետական կադաստրային գնահատման և ժամանակակից հողային հարաբերությունների առանձնահատկությունների հաշվառմամբ:

Հիմնաբառեր. լանդշաֆտային ուղղաձիգ ու գյուղատնտեսական գոտիներ, հարմարվողական լանդշաֆտային մոտեցում, տեխնածին ներգործություն, ավանդական ու օրգանական գյուղատնտեսություն, ագրոարտադրական ռեսուրսներ, գոտիական մասնագիտացում

JEL: Q11, Q14, Q15

Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացումը հիմնվում է երեք ռեսուրսային գործոնների՝ հողի, աշխատանքի և կապիտալի օգտագործման վրա: Այդ համատեքստում իրականացվող ուսումնասիրությունները թույլ են տալիս որոշել դրանցից յուրաքանչյուրի մասնաբաժինը գյուղա-

տնտեսական մթերքների առանձին տեսակների արտադրության մեջ: Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման արդյունքների վրա նշված գործոնների ազդեցության քանակական գնահատման համար կառուցվել են արտադրական գործոնների որակական բնութագրիչները բազմակողմանիորեն հաշվի առնող Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիայի մաթեմատիկական մոդելները¹: Տարբեր մոդելներում գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ձևավորման մեջ հողային գործոնի ներդրումը տարավիճակվել է 11–24%-ի, աշխատանքի և կապիտալի մասնաբաժինը տատանվել է 36–48%-ի սահմաններում:

Տնտեսության ագրարային հատվածում մասնագիտացման գործընթացի վրա ազդեցություն ունեցող առավել կարևոր գործոն են աշխատանքը, տնտեսավարման ազգային ավանդույթներն ու որոշակի հմտությունները, ինչպես նաև մասնագիտական ունակությունները: ՀՀ գյուղատնտեսական արտադրության ձևավորված ճյուղային կառուցվածքը, դրա գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային համակարգի մշակումը հիմնականում պայմանավորել են հանրապետության գյուղական տարաբնակեցման զարգացման ուղղվածությունն ու բնույթը: Սակայն գոյություն ունեն խնդիրներ՝ կապված գյուղական տարածքներում աշխատուժի անբավարար քանակի, գյուղական բնակավայրերի դատարկվելու, տարածուն ավանդական գյուղատնտեսության զարգացման ցածր մակարդակի և բնառեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործման հետ:

Գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հիմնախնդիրների քննարկման ժամանակ հարկ է նկատի ունենալ ինչպես ագրարային, այնպես էլ ոչ գյուղատնտեսական ոլորտների եկամուտ և ավելացված արժեք ստեղծող գործունեության տեսակների բազմազույն շերտը: Այդ դեպքում, գյուղական բնակչության ծերացման և արտագաղթի հետ կապված, արգելք ստեղծող գործոն է պահանջվող որակավորմամբ աշխատող կադրերով և մասնագետներով ապահովվածության պակասը²:

Այսօր, համաձայն ՀՀ գյուղնախարարության կողմից իրականացվող կադրային ապահովվածության մշտադիտարկման տվյալների, ՀՀ լեռնային գոտին և սահմանամերձ տարածաշրջանները, գյուղական բնակչության ինտենսիվ կրճատման և դեպոպուլյացիայի հետ կապված, տնտեսավարման բոլոր ձևերում գյուղատնտեսական կադրերի պակաս են զգում (մասնագետների՝ 3,2–15,2%, իսկ աշխատող կադրերի՝ 2,4–18%):

Գյուղական տնտեսության բազմազանեցումը նոր աշխատատեղերի ստեղծում ու զբաղվածության մակարդակի բարձրացում է ապահովում գյուղական բնակչության համար, արժեքավոր սոցիալական պայմաններ ու պետական աջակցություն է երաշխավորում: Ընդ որում, պահանջվում է հիմնախնդիրների համընթաց լուծում:

¹ Տե՛ս **Замков О., Толстопятенко А., Черемных Ю.**, Математические методы в экономике. М., МГУ, “ДИС”, 1997, էջ 171–173:

² Դատարկ գյուղական բնակավայրերի մեծ քանակության պատճառով (գրեթե 270) օգտագործման ենթակա մոտ 300 հազ. հա գյուղատնտեսական հողատեքեր Հայկական ԽՍՀ-ում դուրս էին մնացել ցանքաշրջանառությունից: Հանրապետության սակավահողության պայմաններում գյուղական բնակավայրերի վերացումը աննպատակահարմար է և ոչ մի դեպքում չի կարող արդարացվել: Որքան ավելի խիտ է բնակավայրերի ցանցը, այնքան ավելի բարձր է հողերի օգտագործման արդյունավետության աստիճանը՝ հատկապես լեռնային տարածաշրջաններում: (Տե՛ս **Авакян Г.**, Люди и горы. М., “Мысль”, 1989, էջ 92–93):

Բազմազանեցման հիմնախնդրի տեսական խոր վերլուծություն է կատարվել Պ. Դրուկերի կողմից, որի տեսակետը մասնագիտացման և բազմազանեցման միջև, ամենայն հավանականությամբ, գործարարության ծավալները, հեռանկարները և տնտեսավարման բոլոր ձևերի արդյունավետությունը որոշող տնտեսության ռեսուրսների օգտագործման հաշվեկշիռն է: Վերջինս փոխվում է շուկայի և ամբողջ տնտեսության մեջ ներձյուղային կառուցվածքի փոփոխությունների հետ մեկտեղ: Այսպես՝ Պ. Դրուկերի կարծիքով. «...ընկերությունը բազմազանեցված է լինելու ապրանքների, շուկաների և վերջնական սպառողների առումներով, բարձր աստիճանի կենտրոնացման է ենթարկվելու մտավոր գիտելիքների սեփական հենակետային բնագավառում և խիստ համակենտրոնացված է լինելու սեփական ապրանքների, շուկաների ու վերջնական սպառողների ոլորտներում»³:

Միաժամանակ, տեխնաժին ներգործության հետևանքով հողերի բերրիության անկմանը զուգահեռ աճում է հողային գործոնի կարևորությունը, ուստի ավանդական բուսաբուծության ճյուղում կարևոր է մշակել և իրականացնել օրգանական ու հանքային պարարտանյութերի լավագույն չափաքանակներով սնուցումը, մշակաբույսերի, պտուղների ու խաղողի պաշտպանության քիմիական միջոցների ու հողապաշտպան տեխնոլոգիաների կիրառումը, հողերի բերրիության ապահովման ու դրա մակարդակի բարձրացման գիտականորեն հիմնավորված համակարգը ներառող միջոցառումները և այլն: Անասնաբուծության ճյուղում ավանդական արտադրական համակարգն ընդգրկում է, նախևառաջ, սահմանափակ կերահանդակների վրա գյուղատնտեսական կենդանիների պահվածքի ու մեծաքանակ կերակրման պայմաններին, ամառային արոտավայրերի ջրաբեխացման տնտեսական արդյունավետության բարձրացմանը, գենոտիպի և վերարտադրության կանոնավոր կազմակերպմանն ու տոհմասելեկցիոն աշխատանքներին առնչվող խնդիրների լուծումը:

Ոչ պակաս կարևոր հանգամանք է, որ տնտեսավարման ավանդական ձևերում օգտագործվում են տեղական կաթնամսատու կովկասյան գորշ ցեղի տավարը, հայկական կիսակոպտաբուրդ ցեղի ոչխարը, դեղին (լեռնային) մեղվատեսակը, որոնք լիովին հարմարեցված են ալպյան լանդշաֆտների արածովի և մեղրատու բուսականության արոտային կերպին, և դրանց դիմակայությունն ու պակաս պահանջկոտությունը շուկայական տնտեսավարման ներկա փուլում համեմատական առավելություններ ունեցող անասնաբուծական մթերքների արտադրության մեջ գոտիական մասնագիտացման առավել նախընտրելի հատկանիշներ են:

Ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլի վերջին շրջանում կարծիք էր ձևավորվել, որ հողային ռեսուրսների տնտեսապես արդյունավետ օգտագործման և գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխման ու մասնագիտացման խորացման հիմնախնդիրները պատշաճ մակարդակով կարող են լուծվել բնատարածքային համալիրների լանդշաֆտաէկոլոգիական տարատեսակության հաշվառմամբ⁴: Սակայն ՀՀ-ում, շուկայական վերակառուցման և հողային բարեփոխումների անցկացման հետ կապված, գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխ-

³ Տե՛ս **Друкер П.**, Менеджерская организация, М., «Кадры», 1993 N8, էջ 27–28:

⁴ Տե՛ս **Агроэкологическая оценка земель, проектирование адаптивно-ландшафтных систем земледелия и агротехнологий /Под ред. В. Кирюшина/.** М., «Росинформагротех», 2005, էջ 12–16:

ման և գոտիական մասնագիտացման մեջ այդ ուղղությունը մատնվել է անուշադրության: Հիմնական խնդիրներ են համարվում հանրային տնտեսությունների վերակազմավորումը, հողերի վերաբաժանումը, հողային սեփականության ձևակերպումը և պետական գրանցումը: Ագրարային հատվածի զարգացման այժմյան փուլում ակնհայտ է, որ սեփականության ցանկացած տեսակի պայմաններում անհնար է ստեղծել տնտեսապես արդյունավետ ագրարային տնտեսավարման ձևեր՝ միաժամանակ չգբաղվելով դրանց մասնագիտացման արտադրական ուղղությունների ձևավորման, ավանդական ու օրգանական գյուղատնտեսության համեմատական գնահատման, հողերի բերրիության աստիճանի բարձրացման և հողային ռեսուրսների վերարտադրության հարցերով:

Հետբարեփոխումային շրջանում ուշադրության արժանացան հողի բերրիության ցուցանիշների անկումը, հումուսի կորուստը և դրա շերտի ու մշակաբույսերի, պտուղների ու խաղողի սնման կարևորագույն տարրերի, ինչպես նաև լեռնային սևահողերի հերկվածության կրճատումը: Մասնագետները հատկապես կարևորում են լեռնային սևահողերի բերրիության մակարդակի բարձրացման խնդրի լուծումը (հանրապետության հողային ծածկի գրեթե 26%-ը), որոնք ոռոգելի մարզագետնային հողերից հետո առավել յուրացված տեսակն են ու արդյունավետ օգտագործվում են տնտեսության ագրարային հատվածում: Միավոր տնտեսական արդյունքի հաշվով, այդ հողերի վրա կարելի է աճեցնել սահմանափակ քանակությամբ ագրոարտադրական ռեսուրսներ օգտագործող և շրջակա միջավայրի վրա նվազագույն տեխնածին ազդեցությամբ, միջազգային չափորոշիչներին համապատասխանող, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքներ: Դա ոչ միայն կարող է մեծացնել հանրապետության արտահանության ներուժը, այլև կնպաստի ազգաբնակչության առողջության ու ընդլայնված վերարտադրության ապահովմանը, հանրապետության պարենային անվտանգության ամրապնդմանը: Այդ հանգամանքը կարևոր նշանակություն ունի ավանդական և օրգանական երկրագործության համեմատական գնահատման համար: Բանն այն է, որ համապատասխան գործիքակազմերը կարող են հաշվարկել ինչպես միավոր հողատարածությունը (1 հա), այնպես էլ միավոր արտադրանքը (1 տ): Ընդհանուր առմամբ, էկոլոգիական բուսաբուծության դեպքում 1 հա հողատեսքի վրա վնասակար ազդեցությունը ավելի քիչ է, քան ավանդականի դեպքում: Սակայն եթե քննարկենք գյուղատնտեսական մթերքների միավոր արտադրության վրա ազդեցությունը, ապա ստացվող արդյունքները շատ հաճախ կարող են նույնաքանակ լինել կամ նույնիսկ ավելի մեծ, քան ավանդականի պարագայում է: Դա պայմանավորված է նրանով, որ օրգանական գյուղատնտեսության դեպքում բերքատվությունը, որպես կանոն, ավելի ցածր է, և, այդ պատճառով, ծավալներով համեմատելի արտադրության համար պահանջվում են մեծ հողատարածություններ: Տվյալ հանգամանքը, իր հերթին, առաջացնում է գյուղատնտեսական հողատեսքերից տնտեսական շրջանառության մեջ լրացուցիչ հողատարածություններ ներգրավելու անհրաժեշտություն, որը պայմանավորում է ջերմոցային գազերի՝ ազոտի ենթօքսիդի (N_2O) արտանետումների ավելացումը և բնառեսուրսային ներուժի կրճատումը: Համանման եզրակացություններ կարելի է անել նաև անասնաբուծության ճյուղի վերաբերյալ: Որքան հայտնի է, էկոլոգիական համակարգի դեպքում գյուղատնտեսական կենդանիները դանդաղ են ավելացնում կենդանի քաշաձը և ոչ մսուրային կերակրման կարիք են զգում, որը լրացուցիչ կերահանդակներ և

ենթակառուցվածքներ է պահանջում. դա լրացուցիչ ծախսերի առաջացման և պատրաստի արտադրանքի թանկացման պատճառ է դառնում:


Հողի նկատմամբ մասնավոր սեփականության և հողօգտագործման խնդիրների լուծման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված քաղաքականության բացակայությունը գյուղատնտեսական արտադրության ռացիոնալ տեղաբաշխման և մասնագիտացման խորացման նպատակով գիտության նվաճումները անբավարար օգտագործելու հիմնական պատճառներից մեկն է: Մենք համակարծիք ենք Վ.Կիրյուշինի հետ այն հարցում, որ ժամանակակից ագրարային գիտությունը (հատկապես ագրարային տնտեսագիտությունը. շեշտադրումը՝ Վ.Մ.) հիմնականում պետք է կողմնորոշված լինի որոշակի հողամասերի սեփականատերերի և օգտագործողների հիմնախնդիրների լուծմանը⁵: Ղա, գուցե, իրականացվում է տվյալ լանդշաֆտային ուղղաձիգ գոտու ազրոէկոլոգիական առանձնահատկությունները հաշվի առնող համապատասխան պետական տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման լիազոր մարմինների կողմից գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման լանդշաֆտային հարմարվողական համակարգի կիրարկության դեպքում: Այդ համակարգը կառուցվում է բնական միջավայրի որոշակի պայմանների նկատմամբ մարդու տնտեսական գործունեության առավելագույն հարմարեցման և բնական ու մարդածին ողջ բազմազանության հաշվառմամբ՝ դրանց արդյունավետ օգտագործման հիման վրա:

Ըստ լանդշաֆտային ուղղաձիգ գոտիների հերթափոխության պայմանների՝ ՀՀ ագրարային հատվածի տարածքային (գոտիական) մասնագիտացման տարբերակումը հարկավոր է բխեցնել գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման տարբեր մակարդակներում ավանդական ու օրգանական համակարգերի համեմատական գնահատման և տնտեսավարման տարբեր ձևերին դրանց հարմարեցման միջոցով: Բացի դրանից, գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային համակարգի ներդրման դեպքում հասանելի է հողային բերրիության և հողածածկի վերականգնման լավագույն ռեժիմ ապահովող կենսազանգվածի հավասարակշռված հաշվեկշիռը: Ղա արտադրական համակարգ է, որը լավ վիճակում է պահպանում հողերը, էկոհամակարգերը և անվտանգ պայմաններ է ապահովում բնակչության առողջության և ընդլայնված վերարտադրության համար: Ղա ուղղված է տեղական պայմաններին բնորոշ էկոլոգիական գործընթացների, կենսաբազմազանության և բնական պարբերաշրջանների, այլ ոչ թե երկրորդային ներգործության արդյունքի կիրառմանը: Շրջակա միջավայրի վիճակը բարելավելու համար օգտագործում են տնտեսավարման ազգային ավանդույթները, մասնագիտական ունակություններն ու հմտությունները, առավել նպատակային են դարձնում նորաստեղծության ու զարգացման գործընթացները և գիտական մոտեցումները, ձևավորում են արդար փոխհարաբերություններ բոլոր շահագրգիռ կողմերի համար, ապահովվում է արժանապատիվ կենսամակարդակ⁶:

⁵ St´u Agroэкологическая оценка земель, проектирование адаптивно-ландшафтных систем земледелия и агротехнологий, նշվ. իրատ., էջ 172–174:

⁶ Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացման կիրարկմամբ նորաստեղծության և զարգացման գործընթացը գիտական մշակումների հիման վրա նոր տեխնոլոգիաներում որոշակի տեխնիկական գաղափարների մշտական ու անընդհատ հոսք և էկոլոգիապես մաքուր ու համեմատական առավելություններ ունեցող ապրանքատեսակների արտադրությունը

Գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային կազմակերպման գլխավոր խնդիրն է հիմնավորել հողերի ագրոէկոլոգիական խմբավորման սկզբունքների, ագրոարտադրական ռեսուրսային ու ագրոէկոլոգիական ներուժի, շուկայի մրցունակության առկայության հիմնավորումը՝ հանրապետության ժամանակակից ագրարային հատվածի բազմակացութաձևության հաշվառմամբ ստեղծելով գյուղատնտեսական արտադրության և ագրոտեխնոլոգիայի գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային համակարգերի նախագծման հիմք:



Գծապատկեր 1. *Գյուղատնտեսական արտադրության մասնագիտացված գոտիների ձևավորման հարմարվողական-լանդշաֆտային համակարգի նախագծման մոդելի կառուցվածքը*

Ագրարային հատվածի զարգացման խորհրդային փուլում՝ հատկապես 1970–80-ական թվականներին, Հայաստանում մեծ ուշադրություն էր դարձվում բնական լանդշաֆտային գոտիների առանձնացման, ագրոլանդշաֆտների ձևավորման, հողատարածքի հակաէրոզիոն միջոցառումների կազմակերպման հարցերին: Սակայն անբավարար ֆինանսավորման պատճառով չեն ավարտվել այդ աշխատանքները: Այժմ պահանջվում է ճշգրտել ագրոլանդշաֆտների սահմանները և դրանց յուրաքանչյուր տիպի համար մարդածին ծանրաբեռնվածության գիտականորեն հիմնավորված չափորոշիչներ մշակել: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքաշրջանառությունը,

խթանելու նպատակ ունի: (Տե՛ս Аграрная экономика: термины и понятия. Энцикл. справ., Гусаков В., Дреза Е., Минск, “Беларус наука”, 2008, էջ 159):

պտուղների ու խաղողի աճեցումը, գյուղատնտեսական կենդանիների բազմացումը և ագրոտեխնոլոգիան հարմարեցված չեն լանդշաֆտային ուղղաձիգ գոտիների հերթագայման առանձնահատկություններին, գոյություն չունի երկրագործության և անասնաբուծության գոտիական մասնագիտացման հարմարվողական համակարգերի արդյունավետության գնահատման միասնական մեթոդիկա:

«Վ տարածքի գյուղատնտեսական արտադրության մասնագիտացված գոտիների ձևավորման հարմարվողական-լանդշաֆտային կազմակերպման համակարգի մոդելը փորձել ենք ցույց տալ (գծապատկեր 1) ագրոարտադրական ռեսուրսային ներուժի գնահատման հիման վրա (բնակլիմայական պայմաններ, հողային ռեսուրսներ, հողի վատթարացման աստիճան, լանդշաֆտային ուղղաձիգ գոտիների դասակարգման համար ցուցանիշների ու չափանիշների ամբողջական վերլուծություն և այլն):

Մեր կարծիքով՝ հարմարվողական գոտիական տեխնոլոգիաները պետք է հաշվի առնեն յուրաքանչյուր ագրոլանդշաֆտի առանձնահատկությունները և գյուղմթերքների արտադրության նախընտրելի մասնագիտացման ու հակաէրոզիոն որոշակի ուղղվածություն ունենան: Դրա համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- Սահմանել լանդշաֆտային ուղղաձիգ գոտիների և ագրոլանդշաֆտների գնահատականն ըստ գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման, բացահայտել հողերի վատթարացման պատճառները և որոշել դրանց ազդեցությունը գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական – լանդշաֆտային – համակարգի վրա:
- Լանդշաֆտային ուղղաձիգ գոտիներում իրականացնել հողերի ագրոէկոլոգիական գնահատում և տիպականացում, ըստ այդմ կատարել հանրապետության ագրարային հատվածի մասնագիտացման արտադրական ուղղությունների գոտիական տարբերակում, դրանց միատեսակ խմբերի առանձնացում՝ ըստ ագրոտեխնիկական գործընթացների բնույթի և արդյունավետության, սահմանել հողերի տիպերն ըստ դրանց օգտագործման ինտենսիվության և նախընտրելի մասնագիտացման արտադրական ուղղության:
- Սահմանել գյուղատնտեսական հողատեսքերի լավագույն հարաբերակցություն՝ լանդշաֆտային ուղղաձիգ և գյուղատնտեսական գոտիների մասնագիտացման արտադրական ուղղություններին համապատասխան:
- Ապահովել ժամանակի և տարածության մեջ գյուղատնտեսական մշակաբույսերի հերթագայումը: Ցանքաշրջանառության տեխնոլոգիաների յուրացումը, հողերի որակի հաշվառմամբ վարելահողերի կամ առանձին հողամասերի վրա մշակաբույսերի տեղաբաշխումը և հերթագայությունը կնպաստի դրանց բերքատվության աճին:
- Հիմնավորել գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման համակարգի տարրերի հարմարվողական-լանդշաֆտայնությունը:
- Կազմակերպել գյուղատնտեսական հողատեսքեր և ցանքաշրջանառություն, հողերի փոխակերպություն, առաջարկել միջոցառումներ ագրոլանդշաֆտներում էկոտոնների (ֆիզիկապես տարբերվող համա-

կեցությունների միջև անցողիկ շերտերի, օրինակ՝ անտառաշերտերի) ստեղծման և ռացիոնալ տարածքային տեղաբաշխման վերաբերյալ:

- Ըստ լանդշաֆտային ուղղաձիգ գոտիների՝ հիմնավորել գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման տարբերակված համակարգի արդյունավետությունը, կազմակերպել գոտիական մասնագիտացված տարածքը՝ տարբեր չափերի ու գործածելի հողամասերի, պաշտպանական անտառատնկարկների, ճանապարհների և սերվիտուտների հիմնավորմամբ:
- Ազրոլանդշաֆտների առանձնահատկությունների հաշվառմամբ մշակել հարմարվողական ագրոտեխնոլոգիաներ (ինտենսիվ, խոնավություն պահող, էներգիա տնտեսող, էկոլոգիապես անվտանգ և այլն):
- Լանդշաֆտային ուղղաձիգ գոտիների առանձնահատկությունների համապատասխանությամբ լուծել գլխավոր (հիմնական), լրացուցիչ ու օժանդակ ենթաձյուղերի մասնագիտացման և գյուղատնտեսական մշակաբույսերի, պտուղների ու խաղողի բերքի և անասնաբուծական մթերքների ծրագրավորման խնդիրը:
- Մշակել բնական կերահանդակների արմատական և մակերևութային բարելավման նախագծեր անասնաբուծության ներձյուղային մասնագիտացման խորացման նպատակով, ստեղծել խմելու ջրի կետեր, արածեցման նպատակով կանոնակարգել անտառների օգտագործումը (հատկապես խոզաբուծության ենթաձյուղում): Կենդանիների ամառային պահվածքի ժամանակ կերհանդակները ավելի շատ օգտագործվում են կարճաժամկետ տնտեսական շահի, քան երկարաժամկետ բնապահպանական օգուտների նկատառումներով:
- Կատարել գյուղատնտեսության արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային մշակված համակարգերի էկոլոգատնտեսական գնահատում:

Կարծում ենք՝ հիմնվելով Վ. Կիրյուշինի կողմից մշակված մեթոդաբանության վրա, ագրոլանդշաֆտի կայունության գինը (Q_{14}) կարող է որոշվել ՀՀ տարածքում առանձնացված լանդշաֆտային ուղղաձիգ գոտիների սահմաններում՝ որպես գյուղմթերքների արտադրության մասնագիտացման գործընթացում ($Q_{այ}$) տնտեսավարողի ամենամյա ծախսերի և հողերի բերրիության՝ առաջին հերթին հումուսի վերարտադրությունն ($Q_{ՀԲԿ}$) ապահովող արտադրական ծախսերի մի մասի գումար՝ արտահայտված դրամներով.

$$Q_{14} = Q_{այ} + Q_{ՀԲԿ} :$$

Այդ գինը կարող է ներառվել գյուղատնտեսական ապրանքարտադրողների արտադրական ծախսերի մեջ, հետևաբար՝ գյուղատնտեսական մթերքների իրացման շուկայական գնի մեջ:

Ազրոլանդշաֆտի կայունության գները որոշելու՝ առաջարկվող մեթոդաբանությամբ պետք է տարբերակել պետության և հողի սեփականատիրոջ ծախսերը: Միջոցառումները կարող են կազմակերպվել լանդշաֆտային ուղղաձիգ գոտիներին վերաբերող գնային մեխանիզմների պետական կարգավորման քաղաքականությամբ համապատասխան: Վերջինս ներկայացնում է պետության գործունեությունը, որն ուղղված է գների կայունացմանը, հաստատագրված գների սահմանմանը, հարկերի, ապահովագրության, վարկերի և այլնի միջոցով գների վրա անուղղակի ազդեցության օգտագործմանը: Հողերի բերրիության ամենամյա վերարտադրության ծախսերը կարելի է որոշել

ՀՀ լանդշաֆտային ուղղաձիգ գոտիներին հարմարեցված գյուղատնտեսական մշակաբույսերի, պտուղների ու խաղողի աճեցման և գյուղատնտեսական կենդանիների բազմացման գիտականորեն հիմնավորված տեխնոլոգիաների հիման վրա: Դրա համար կարելի է օգտագործել բերքի և անասնաբուժական մթերքների ծրագրավորման հայտնի տնտեսամաթեմատիկական մոդելները:

Հեռանկարում պատշաճ զարգացում են ստանալու գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային կազմակերպման նախապատրաստության հետևյալ փոխկապված ուղղությունները. ՀՀ տարածքի գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման ճշգրտումը և մանրամասնումը, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրության գործում մասնագիտացման խորացումը, հողերի պահպանությունն ու բերրիության ավելացումը, գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման դեպքում ագրոլանդշաֆտների վրա էկոլոգիապես հիմնավորված ու տնտեսապես արդյունավետ հարմարվողական համակարգերն ապահովող տեխնածին ծանրաբեռնվածության չափորոշիչների մշակումը, գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման արդյունավետության բարձրացումը էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության պահանջների հաշվառմամբ:

Սույն հայեցակարգում ընդհանուր մոտեցումներ են մշակվել գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային համակարգի ձևավորման նկատմամբ: Համապատասխան նախապատրաստական աշխատանքներն անհրաժեշտ է իրագործել սեփականության տարբեր ձևերի ու հողամասերի չափերի, տնտեսավարման բոլոր ձևերի մասնագիտացման արտադրական ուղղությունների առանձնահատկությունների հաշվառմամբ: Գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային կազմակերպման դեպքում պետք է օգտագործել հողաշինարարության, հողերի ներհամայնքային ու պետական կադաստրային գնահատման, հողային, երկրաբուսաբանական, ագրոքիմիական, ինչպես նաև հետազոտությունների ու բացահայտումների այլ տեսակների նյութերը:

ՀՀ տարածքում գյուղատնտեսական արտադրության գոտիական մասնագիտացման հարմարվողական-լանդշաֆտային կազմակերպման համակարգի վերևում շարադրված դրույթների փուլային իրականացումը հնարավոր է ինչպես մարզային և տարածաշրջանային (լանդշաֆտային ուղղաձիգ ու գյուղատնտեսական գոտիների և ագրոլանդշաֆտների սահմաններում), այնպես էլ որոշակի լանդշաֆտային տեղամասում գտնվող առանձին ագրոֆիրմաների և ագրոհոլդինգային տիպի խոշոր խմբակային միավորումների մակարդակով: Ինչ վերաբերում է առանձին հողաբաժիններով մանրապրանքային գյուղացիական տնտեսություններին ու տնտեսավարման մյուս փոքր ձևերին, ապա դրանց տրամադրված հողամասերում հարկ է իրականացնել մեծ ծավալի ագրոլանդշաֆտների տարածքի կազմակերպում՝ մշակված նախագծերի հիման վրա: Հողերի պետական կադաստրային գնահատականը, հողային հարկը և հողային ուրիշ վճարները նույնպես տարբերակվելու են լանդշաֆտային ուղղաձիգ գոտիներին համապատասխան:

Գյուղատնտեսական հողատեսքերի պետական կադաստրային գնահատման նոր մեթոդաբանությանը համապատասխան՝ բերրիության վերականգնման ծախսերը պետք է ներառել հողային ռենտայի մեջ և հարկման ենթարկել:

ՀՀ լանդշաֆտային ուղղաձիգ ու գյուղատնտեսական գոտիների սահմաններում մասշտաբային հակաէրոզիոն միջոցառումների իրականացումը հնարավոր է պետության ակտիվ ֆինանսական աջակցության դեպքում: Հետախուզական և նախագծային աշխատանքների ֆինանսավորման աղբյուրներ կարող են դառնալ հողային հարկի մի մասը և պետական (համայնքային) բյուջեի միջոցները:

Օգտագործված գրականություն

1. Замков О., Толстопятенко А., Черемных Ю., Математические методы в экономике. М., МГУ, изд. “ДИС”, 1997.
2. Авакян Г., Люди и горы. М., “Мысль”, 1989.
3. Друкер П., Менеджерская организация, М., “Кадры”, 1993, N8.
4. Агрэколагічная ацэнка зямель, праектаванне адаптыўна-ландшафтных сістэм земледелія і агратэхналогій /Под ред. В. Кірышына/. М., “Росінформагротэх”, 2005.
5. Аграрная эканоміка: тэрміны і паняцці. Энцикл. справ., Гусакі В., Дрэза Е., Мінск, “Беларус навука”, 2008.

ВОЛОДЯ МАНАСЯН

Доцент кафедры Природопользования АГЭУ,
кандидат географических наук

Система адаптивно-ландшафтной организации поясной специализации сельскохозяйственного производства РА.

– В статье изучены комплексные вопросы адаптации поясной специализации аграрного сектора к особенностям высотных ландшафтов РА. Предлагается алгоритм определения цены устойчивости агроландшафтов на основе суммы ежегодных затрат на противоэрозионную организацию территории и части производственных затрат на воспроизводство почвенного плодородия. Актуализирована необходимость дифференциации государственной кадастровой оценки земель и земельных платежей по высотным поясным ландшафтам.

Ключевые слова: кадастровая стоимость, традиционное и органическое сельское хозяйство, агроэкологическая система, поясная специализация, адаптивно-ландшафтное устройство территории.

JEL: Q11, Q14, Q15

VOLODYA MANASYAN

Associate Professor at the Chair of Environmental Economics
at ASUE, PhD in Geographical Sciences

The System of Adaptive-landscape Organization of Zonal Specialization in Agricultural Production in the RA.

– Complex issues of adaptation of zonal specialization of agrarian sector and peculiarities of high-altitude landscapes have been considered in this article. The algorithm for determining the agro-landscape sustainability price on the basis of yearly costs on anti-erosion adjustment of territory and parts of production costs for soil fertility reproduction is suggested. The necessity of differentiation of state cadastral land assessment and land payments of high-altitude zonal landscapes adjusted for peculiarities of land market relations has been updated.

Key Words: cadastral price, traditional and organic agriculture, agro-ecological system, zonal specialization, adaptive-landscape territory adjustment.

JEL: Q11, Q14, Q15